**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 24**

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի

խորհրդի 24.09.2010թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին:
2. Ֆակուլտետի ամբիոնների ասպիրանտների ատենախոսությունների գիտական թեմաների, անհատական պլանների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
3. Դոցենտ Տ.Հարությունյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:
4. Անվանական կրթաթոշակների ներկայացման հարցը:

1. Լսեցին - Ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին:
Ելույթ ունեցավ դեկանի տեղակալ Ա.Թասլաքյանը:

Որոշեցին – Ընդունել ի գիտություն ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին զեկույցը:

2. Լսեցին – Ֆակուլտետի ամբիոնների ասպիրանտների ատենախոսությունների գիտական թեմաների, անհատական պլանների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել.

1. Դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի հայցորդ Աննա Վրեժի Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեման «Մի դասի երկրորդ կարգի մատրից-ֆունկցիաների ֆակտորիզացիան», Ա.01.02 – դիֆերենցիալ հավասարումներ մասնագիտությամբ (գիտ. ղեկ.՝ ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Քամալյան):
2. Ասպիրանտ Նինա Բալայանի թեկնածուական ատենախոսության «ՀՀ սոցիալական և կենսաթոշակային համակարգի ակտուարական վերլուծություն» թեման, անհատական պլանը, գիտ. ղեկավար հաստատել ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Ռ.Գևորգյանին:
3. Ասպիրանտ Արման Բարսեղյանի թեկնածուական ատենախոսության «ՀՀ առևտրային բանկերի մոդելավորման և կառավարման

հիմնախնդիրներ» թեման, անհատական պլանը, գիտ. ղեկավար հաստատել ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Թորոյանին:

4. Ասպիրանտ Վազգեն Շախոյանի թեկնածուական ատենախոսության «Որոշ ստոխաստիկ ֆինանսական մոդելների բնութագրիչների կանխատեսումը» թեման, անհատական պլանը, գիտ. ղեկավար հաստատել ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Կ.Գասպարյանին:
5. Ասպիրանտ Հայկ Ալեքսանյանի թեկնածուական ատենախոսության «Օրթոգոնալ համակարգերով գրիդի ալգորիթմի զուգամիտության մասին» թեման, անհատական պլանը, գիտ. ղեկավար հաստատել ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր ՀՀ ԳԱԱ անդամ Ա.Սահակյանին:

3. **Լսեցին -** Դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի դոցենտ Տ. Ն.Հարությունյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

**Որոշեցին –** Հաստատել դոցենտ Տ.Ն.Հարությունյանի դոկտորական ատենախոսության թեման «Շտուրմ-Լիուվիլի և Դիրակի օպերատորների ընտանիքի սեփական արժեքների ֆունկցիան»:

4. **Լսեցին –** 2010-11 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ֆակուլտետի ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը:

**Որոշեցին -** Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հետևյալ ուսանողներին ներկայացնել անվանական կրթաթոշակի.

1. Ակադեմիկոս Արտաշես Շահինյանի անվ. կրթաթոշակ
   **Մանվելյան Աստղիկ Գագիկի** մաթեմատիկա 4-րդ կուրս
2. Ակադեմիկոս Մխիթար Ջրբաշյանի անվ. կրթաթոշակ
   **Բենզաքարյան Ալեքսանդր Ֆելիքսի** մաթեմատիկա 1-ին կուրս մագիստր
3. Ակադեմիկոս Նագուշ Հարությունյանի անվ. կրթաթոշակ
   **Շախբազյան Գեղամ Արտավազդի** մեխանիկա 1-ին կուրս մագիստր

Խորհրդի նախագահ Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար Ս.Հ.Ջիլավյան